



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Առինջ
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ Մաշտոցի փողոց
51, Հեռ. (010) 61 45 01, E-mail arinj-hamaynk@mail.ru
,arinj.kotayq@mta.gov.am

N 166
28 փետրվար 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆՆՈՒՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ
մասի 9-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում համայնքի ղեկավարի 2020թվականի
թիվ 149-Ա-ից մինչև 167-Ա որոշումները:

Առդիր 46 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Կար. Գլխավոր մասնագետ՝ Ն. Համբարձումյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 149-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՅԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 –Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Նարինե Վաչիկի Թորոսյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Նարինե Վաչիկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Առինջ գյուղի Ա թաղամաս 3-րդ փողոց թիվ 14 հասցեում գտնվող 0.08 հա հողամասը /հիմք սեփ.վկայական N 2375051/ վերահասցեավորել Առինջ համայնք Ա թաղամաս 3-րդ փողոց թիվ 13 (կադաստրային ծածկագիր 07-011-0050-0065):

2.Նարինե Վաչիկի Թորոսյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Վաչիկի Թորոսյանին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.փետրվարի24

գ.Առինջ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 150-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Սոնյա Խորենի Մովսիսյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Սոնյա Խորենի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Պետրոս Դուրյան թաղամաս 2-րդ փողոց թիվ65 հասցեում գտնվող հողամասի բաժանումից առաջացած $S_1=0.0430$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Պետրոս Դուրյան թաղամաս 2-րդ փողոց թիվ 65 հասցեն, $S_2=0.0570$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Պետրոս Դուրյան թաղամաս 13-րդ փողոց թիվ 5 հասցեն:

2.Սոնյա Խորենի Մովսիսյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնյա Խորենի Մովսիսյանին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 151-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Աիդա Արշակյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Աիդա Զախարի Արշակյանին, Աննա Զախարի Արշակյանին, Ալվարդ Մեժլումի Հովակիմյանին, Անահիտ Զախարի Արշակյանին, Գոհար Զախարի Արշակյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Առինջ գյուղի 11-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող 0.1188 հա հողամասը /հիմք սեփ.վկայական N 20112017-07-0043/վերահասցեավորել Առինջ համայնք 11-րդ փողոց թիվ8/3 (կադաստրային ծածկագիր 07-011-0094-0005):
- 2.Աիդա Զախարի Արշակյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աիդա Զախարի Արշակյանինին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 152-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վարդան Ռաֆիկի Բուռնուսուլյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Վարդան Ռաֆիկի Բուռնուսուլյանին, Զոյա Միսակի Տարգյանի, Էդվարդ Վարդանի Բուռնուսուլյան, Անուշիկ Վարդանի Բուռնուսուլյան համատեղ սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող 17-րդ փողոց թիվ1 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի բաժանումից առաջացած $S_1=0.09285$ հա մակերեսով բնակելի տանը և հողամասին տրամադրել Առինջ համայնք 17-րդ փողոց թիվ1 հասցեն, $S_2=0.01665$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք 9-րդ փողոց թիվ21/1 հասցեն:

2.Վարդան Ռաֆիկի Բուռնուսուլյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Ռաֆիկի Բուռնուսուլյանին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 153-Ա

ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի 17.02.2020թվականի նիստի թիվ 01/20 արձանագրությունը . **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Հաստատել Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգը համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.փետրվարի24
գ.Առինջ



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱԿԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում են ներքին աուդիտի գործունեության նպատակը, Առինջի համայնքապետարանի կողմից հրավիրված ներքին աուդիտորի (այսուհետ՝ Ներքին աուդիտի բաժին) լիազորությունները, ներքին աուդիտի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավունքներն ու պարտականությունները, ներքին աուդիտի գործունեության հետ կապված այլ հարաբերություններ: Կանոնակարգը հանդիսանում է Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի աշխատանքներն իրականացնելու հիմնական աշխատանքային փաստաթուղթ:

2. Կանոնակարգի դրույթները համապատասխանում են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին և ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին:

3. Կանոնակարգի բաժիններն են.

- 1) Ներքին աուդիտի գործունեության նպատակը,
- 2) Ներքին աուդիտի բաժնի լիազորությունները,
- 3) Ներքին աուդիտի կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները,
- 4) Ներքին աուդիտի միջավայրի սահմանումը և դրա փաստաթղթավորումը,
- 5) Տարեկան և ռազմավարական ծրագրերի պլանավորումը, ռիսկերի գնահատումը,
- 6) Վերլուծություններ և նախապատրաստական աշխատանքներ, առաջադրանքի պլանավորում,
- 7) Ներքին աուդիտի աշխատանքներին փորձագետների կամ խորհրդատուների ներգրավումը,
- 8) Ներքին աուդիտի առաջադրանքի իրականացում,
- 9) Ներքին աուդիտի շրջանակների սահմանափակումները, տեղեկացման սովորական շղթան և տեղեկացում սովորական շղթայից դուրս,
- 10) Ներքին աուդիտի հաշվետվությունների կազմումը և տրամադրումը,
- 11) Վերստուգման գործընթաց,
- 12) Ներքին աուդիտի հետ կապված փաստաթղթերի կազմման և պահպանման առանձնահատկությունները,
- 13) Արտաքին աուդիտների հետ Ներքին աուդիտի բաժնի աշխատանքների կազմակերպումը,
- 14) Արտաքին գնահատումներ,
- 15) Ներքին աուդիտի բաժնի համագործակցությունը ստուգում իրականացնող մարմինների և արտաքին աուդիտի մարմնի հետ:

II. ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

4. Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Առինջի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Առինջի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

5. Առինջի համայնքապետարանում ներքին աուդիտի գործունեության նպատակներն են.

- 1) օժանդակել Առինջի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
- 2) օժանդակել Առինջ համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3) տրամադրել վերահսկող մարմիններին Առինջ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4) օժանդակել Առինջ համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

III. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Ներքին աուդիտի բաժնի պետի և ներքին աուդիտորների համար հասանելի են Առինջի համայնքապետարանի գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:

7. Ներքին աուդիտի բաժնի պետը և ներքին աուդիտորներն իրավունք ունեն՝

1) աջակցություն ստանալու այն միավորների ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը: Աուդիտի ենթարկվող միավորի պատասխանատու աշխատակիցները պարտավոր են պատասխանել ներքին աուդիտորների՝ ներքին աուդիտի իրականացման շրջանակում տրված հարցերին,

2) պահանջելու, որպեսզի աուդիտի իրականացման ընթացքում աուդիտի ենթակա միավորներն ապահովեն ներքին աուդիտորների մուտքը կազմակերպության տարածքներ, ինչպես նաև ներքին աուդիտորների համար հնարավորություն ստեղծեն նյութական արժեքները գույքագրելու կամ հաշվառելու՝ առկայությունը ստուգելու նպատակով,

3) միավորների պատասխանատու աշխատակիցներից պահանջելու աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվություն,

4) գրավոր հարցումներ անել ինչպես Առինջի համայնքապետարանի միավորներին, այնպես էլ համայնքապետարանից դուրս: Անհրաժեշտությունից ելնելով՝ Ներքին աուդիտի բաժնի պետը կարող է յուրաքանչյուր միավորի ղեկավարից պահանջել արտաքին հաստատման նամակների ուղարկումը գործընկերներին (այդ թվում՝ բանկեր, գրավատներ, այլ պետական մարմիններ):

8. Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է իրականացնի «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորությունները և նա պատասխանատու է Ներքին աուդիտի բաժնի ընդհանուր գործունեության համար: Ներքին աուդիտի բաժնի պետը պատասխանատու է Ներքին աուդիտի բաժնի գործունեության ընթացիկ ուսումնասիրությունների համար՝ ներքին գնահատումների միջոցով իրականացնելով աուդիտի որակի երաշխավորման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև արտաքին խորհրդատուների: Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումների համար սահմանվում են հետևյալ ստուգաթերթերը և հարցաշարերը՝

1) Աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատման ստուգաթերթ՝ համաձայն Ձև N 1-ի,

2) Առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ՝ տրված աուդիտի ենթարկվող միավորի կողմից՝ համաձայն Ձև N 2-ի,

3) Ներքին աուդիտի ստանդարտներին և վարքագծի կանոններին համապատասխանության գնահատման ստուգաթերթերի ձևաչափը՝ համաձայն Ձև N 3-ի:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ներքին աուդիտի կոմիտեն Առինջ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնքի ղեկավար) ձևավորած և նրա կողմից ղեկավարվող կոլեգիալ մարմին է, որն աջակցում է Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի համակարգին և այդ նպատակով իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներքին աուդիտի գործունեությանն առնչվող այլ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված լիազորություններ:

10. Կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության: Նիստ կարող է գումարվել Կոմիտեի նախագահի, անդամի, ինչպես նաև քարտուղարի առաջարկությամբ: Ներքին աուդիտի բաժնի պետը մասնակցում է Կոմիտեի նիստերին քարտուղարի կարգավիճակով՝ առանց քվեարկելու իրավունքի:

11. Կոմիտեի նիստը վարում է Կոմիտեի նախագահը՝ Համայնքի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Համայնքի ղեկավարի տեղակալը: Կոմիտեի նիստերին կարող են հրավիրվել Կոմիտեի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող ու տիրապետող աշխատակիցները և պաշտոնատար անձինք:

12. Կոմիտեի նիստերն արձանագրվում են, որն ապահովում է Կոմիտեի քարտուղարը: Կոմիտեի նիստի արձանագրությունը ստորագրվում է նախագահողի և քարտուղարի կողմից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի նիստերի արձանագրությունները պահվում են Ներքին աուդիտի բաժնում: Արձանագրության կրկնօրինակը (պատճենը) տրամադրվում են Կոմիտեի անդամներին, իսկ արձանագրության քաղվածքը՝ աուդիտի ենթարկված այն միավորների ղեկավարներին, որոնց գործունեությանն է առնչվում Կոմիտեում քննարկված հարցը:

13. Կոմիտեի քարտուղարի կողմից վարվում է Կոմիտեի նիստերին մասնակցած Կոմիտեի անդամների և հրավիրվածների հաշվառման մատյան:

14. Կոմիտեն քննարկում է այն հարցերը, որոնք ներկայացվում են Կոմիտեի նիստի քննարկմանը: Ներքին աուդիտի բաժնի պետը, նախքան նշված հարցերը Կոմիտեի քննարկմանը ներկայացնելը, պետք է քննարկի դրանք Համայնքի ղեկավարի հետ:

15. Կոմիտեի անդամները Կոմիտեի քննարկմանը ներկայացվող հարցերի շուրջ միայն կարող են դիմել Ներքին աուդիտի բաժնին՝ պարզաբանումներ ստանալու համար: Եթե պարզաբանումների համար անհրաժեշտ է գաղտնի բնույթի տեղեկատվություն, ապա դրա տրամադրումը պետք է իրականացվի միայն Համայնքի ղեկավարի գրավոր թույլտվության առկայության դեպքում: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գաղտնի ճանաչված տեղեկատվությունը Կոմիտեն քննարկում է դոկիմակ նիստի ընթացքում: Գաղտնի հարցերի վերաբերյալ Կոմիտեի անդամները քննարկումներն իրականացնում են միայն Կոմիտեի նիստի ընթացքում:

16. Կոմիտեի նիստն իրավագոր է համարվում այն դեպքում, եթե ներկա են Կոմիտեի անդամների կեսից ավելին: Նիստում քննարկված հարցերի շուրջ որոշում է ընդունվում, եթե կողմ է քվեարկել ներկա անդամների կեսից ավելին: Որոշում ընդունելու ժամանակ ձայների հավասար լինելու պայմաններում Կոմիտեի ղեկավարի ձայնը վճռորոշ է:

V. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

17. Ներքին աուդիտի ենթակա միջավայրը ներառում է Առինջի համայնքապետարանի գործունեությանն առնչվող բոլոր գործառնությունների և համայնքապետարանի գործունեության արդյունքները, այսինքն՝ համայնքապետարանի ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները:

Ներքին աուդիտի միջավայրի տարրերը ներքին աուդիտի ենթակա միավորներն են, որոնք ներառում են համայնքապետարանի ամբողջ համակարգը՝ համայնքային կազմակերպությունները՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (ՀՈԱԿ), փակ բաժնետիրական ընկերություններ (ՓԲԸ), հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները (բաժիններ), այլ գործընթացները և ծրագրերը:

18. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ենթակա միավորներն են՝

- 1) «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ,
- 2) «Առինջի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ,
- 3) Այլ գործընթացներ և ծրագրեր:

19. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ենթակա վերը նշված միավորների ղեկավարները կամ պատասխանատուները պետք է սահմանեն իրենց կողմից իրականացվող գործառնությունների նկարագրերը և կազմեն դրանց գծապատկերները:

20. Յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ նշված նկարագրերը և գծապատկերները ենթակա են վերանայման և, անհրաժեշտության դեպքում, նաև փոփոխման:

21. Գործառնությունների հաստատված նկարագրերը և կազմված գծապատկերները՝ դրանց հիմքերի հետ միասին, պահվում են համապատասխան միավորում, իսկ դրանց կրկնօրինակները ներկայացվում են Ներքին աուդիտի բաժնին՝ դրանց հաստատումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

22. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ենթակա յուրաքանչյուր միավորի գործառնությունների նկարագրերն ու գծապատկերներն օգտագործվում են աուդիտի առաջադրանքների պլանավորման և իրականացման ընթացքում:

Գնումների գործընթացի կազմակերպման մասով անհրաժեշտ է, որ գնումների համակարգողը գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելուն, իսկ պատասխանատու ստորաբաժանումը

հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը տրամադրեն Ներքին աուդիտի բաժնին:

VI. ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

23. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ: Ռազմավարական ծրագիրը մշակվում է Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից:

24. Ռազմավարական ծրագիրը սահմանում է Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվող աշխատանքները, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտների ժամկետները (հաճախականությունը) և հնարավորություն է տալիս կազմել աուդիտի տարեկան ծրագրեր՝ ելնելով առկա ռեսուրսներից:

25. Ռազմավարական և տարեկան ծրագրերի և դրանց փոփոխությունների նախագծերը քննարկվում են Համայնքի ղեկավարի և Կոմիտեի անդամների հետ:

26. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հաստատվում է մինչև տվյալ տարվա հունվարի 1-ը: Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը վավերացվում է Համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ընդ որում, բացառությամբ միավորների քանակի ավելացման դեպքերի, առաջին անգամ վավերացված ռազմավարական ծրագրում ընդգրկված միավորների քանակում տվյալ տարվա ընթացքում կատարվելիք հանրագումարային փոփոխությունները, այդ թվում միավորների քանակի նվազեցումները չեն կարող գերազանցել այդ տարվա համար ծրագրով սահմանված միավորների ընդհանուր քանակի 10 տոկոսը: Ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները, վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

27. Առինջի համայնքապետարանի ներքին աուդիտի ենթակա միավորները մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը Ներքին աուդիտի բաժնի պետը է ներկայացնում իրենց կողմից կազմված (լրացված) ռիսկերի գնահատման տեղեկագիրը (Ձև N 4): Համապատասխան միավորը ռիսկերի գնահատման տեղեկագիրը լրացնում է իր կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառնության համար՝ նշելով նաև այդ գործառնության չկատարման կամ մասնակի կատարման հետևանքով առաջացող բոլոր հնարավոր ռիսկերի մասին:

28. Տեղեկագրերն ստանալուց հետո՝ Ներքին աուդիտի բաժնի պետը է կիրառի ռիսկերի գնահատման չափորոշիչներ՝ ներքին աուդիտի ենթակա միավորի կողմից ներկայացված ռիսկերի գնահատման տեղեկագրերում առկա գնահատականների վերագնահատման համար:

29. Առինջի համայնքապետարանի Ներքին աուդիտի բաժնի կարող է կիրառել հետևյալ ռիսկերի գնահատման չափորոշիչները.

N	Չափորոշիչ	Տեսակը
1.	Նշանակալիություն	ընտրանքային
2.	Ֆինանսական ազդեցություն	ընտրանքային
3.	Ստացված ֆինանսավորման չափ	ընտրանքային
4.	Հայտնաբերված թերացումներ	ընտրանքային
5.	Փոփոխությունների մակարդակ	ընտրանքային
6.	Ստացված արձագանք	ընտրանքային
7.	Կիրառված պատժամիջոցներ և խրախուսանքներ	ընտրանքային
8.	Այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքներ	ընտրանքային
9.	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ	պարտադիր

30. Ընթացիկ տարում կարող է անհրաժեշտություն առաջանալ իրականացնելու լրացուցիչ առաջադրանք: Լրացուցիչ առաջադրանք նախաձեռնելու համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերում: Ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմման ընթացքում կարելի է նախատեսել ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր, որոնք չեն կարող գերազանցել ամբողջ առաջադրանքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների 20 տոկոսը:

31. Առինջի համայնքապետարանի Ներքին աուդիտի բաժնի պետը ռազմավարական և տարեկան ծրագրերի պլանավորման իրականացումից անմիջապես հետո Համայնքի ղեկավարին պետք է ներկայացնի աուդիտի իրականացման համար անհրաժեշտ և հասանելի ռեսուրսների հաշվարկը՝ և մարդկային, և տեխնիկական:

Ռեսուրսների պլանավորման ընթացքում Ներքին աուդիտի բաժնի պետը կարող է ներգրավել ներքին փորձագետների և խորհրդատուներին:

Անընդհատության ապահովման նպատակով՝ տեխնիկական ռեսուրսների պլանավորումը պետք է իրականացվի առնվազն 3 տարով:

VII. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

32.Ներքին աուդիտի իրականացման համար անհրաժեշտ է տեղեկատվության բազմակողմանի վերլուծություն, համադրում և ցուցանիշների դուրս բերում, այնուհետև պրոֆիլավորում:

33.Առաջադրանքների պլանավորմանը պետք է նախորդի ներքին աուդիտորների կողմից Առինջի համայնքապետարանի ամբողջ ծավալով տեղեկատվության հավաքագրումը և վերամշակումը: Ներքին աուդիտի բաժնի պետի և ներքին աուդիտորների համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետք է հասանելի լինի Առինջի համայնքապետարանի գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը:

34.Ներքին աուդիտորները, իրենց աշխատանքների կազմակերպման և արդյունավետ իրականացման նպատակով, կարող են ստանալ Առինջի համայնքապետարանում և համայնքային կազմակերպություններում պահպանվող ամբողջ էլեկտրոնային բազաների, ինչպես նաև էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի հասանելիության իրավունք: Հասանելիության իրավունքն ստանալու նպատակով՝ Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է գրավոր դիմի համապատասխան միավորի ղեկավարին: Այն տեղեկությունների ստացման համար, որոնց նկատմամբ հասանելիությունը թույլատրվում է միայն Համայնքի ղեկավարի կարգադրությամբ կամ գրավոր թույլտվության համաձայն, Ներքին աուդիտի բաժնի պետը սահմանված կարգով դիմում է Համայնքի ղեկավարին և ներկայացնում այն աուդիտորների ցանկը, որոնք կարող են օգտվել տվյալներից: Նշված անձինք պատասխանատվություն են կրում տեղեկատվության գաղտնիության չպահպանման համար՝ օրենքով սահմանված կարգով: Մուտքի ծածկագիրը և նշանաբառը տրվում է Ներքին աուդիտի բաժնի այն աշխատակցին, որը զբաղվելու է այդ տեղեկատվական համակարգերով: Արգելվում է նշանաբառի և ծածկագրի փոխանցումն այլ անձանց կամ ոչ աուդիտորական նպատակներով տեղեկատվության օգտագործումը:

35.Ներքին աուդիտի իրականացման ընթացքում այն աուդիտորների ցանկը, որոնք կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել նաև գաղտնի տվյալներից, հաստատում է Համայնքի ղեկավարը:

36.Ներքին աուդիտի բաժնի կողմից ստացվող տեղեկատվությունը պետք է ընդգրկի նաև որևէ միավորի կողմից որևէ գործառույթի գծով վերլուծությունները: Վերլուծության համար պետք է օգտագործվի նաև այն տեղեկատվությունը, որը ձեռք է բերվել կամ կազմվել է ներքին աուդիտի ենթակա միավորում նախորդ տարիներին իրականացված աուդիտի առաջադրանքներից: Տեղեկատվության հավաքագրումից և վերլուծությունից հետո Ներքին աուդիտի բաժինը պետք է նախանշի նաև իր ցուցիչները (սպասումները), որոնք պետք է օգտագործվեն գալիք աուդիտի ընթացքում: Նախատեսվում է Առինջի համայնքապետարանի համար էական համարվող շեղումների շեմը սահմանել շուրջ 10-20 տոկոսի սահմաններում:

37.Առաջադրանքի պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և նյութերը հավաքագրվում են Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջ տարվա ընթացքում մինչև առաջադրանքի իրականացման մեկնարկը: Յուրաքանչյուր տեղեկատվության ուսումնասիրման արդյունքում ստացված սպասումների և հավաքագրված տեղեկատվության տարբերության հայտնաբերման դեպքում դրա վերաբերյալ գալիք աուդիտի աշխատանքային ծրագրում պետք է նախատեսվեն նաև կատարվելիք ընթացակարգեր:

38.Տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար կսահմանվի կարգապահական պատասխանատվություն:

39.Առաջադրանք սկսելու համար Ներքին աուդիտի բաժինը պետք է ներքին աուդիտի ենթակա միավորի ղեկավարին ներկայացնի ներքին աուդիտ սկսելու մասին կարգադրության նախագիծը: Աուդիտի իրականացման կարգադրությունը պետք է պարունակի աուդիտի նպատակը, իրականացման ժամկետները, աուդիտորների տվյալները, հրավիրված փորձագետները կամ խորհրդատուները (առկայության դեպքում):

40.Յուրաքանչյուր առաջադրանքի մեկնարկից երեք աշխատանքային օր առաջ, Ներքին աուդիտի բաժինը պետք է զգուշացնի ներքին աուդիտի ենթակա միավորին՝ վերջինիս տրամադրելով առաջադրանքի մեկնարկի վերաբերյալ կարգադրությունը: Ներքին աուդիտը կարող է իրականացվել նաև անմիջապես կարգադրության ներկայացման պահից, օրինակ՝ ակտիվների կամ փաստաթղթերի գույքագրում, քննչական մարմինների խնդրանքով իրականացվող աուդիտ և այլն:

41.Եթե Ներքին աուդիտի բաժինը հիմնավորում է, որ ներքին աուդիտի ենթակա առանձին միավորի ռիսկը կտրուկ բարձրացել է՝ հսկողություն իրականացնող մարմինների կողմից հայտնաբերվել են խախտումներ, կատարվել են կառուցվածքային կամ այլ փոփոխություններ, սպասումների և փաստացի տվյալների շեղումները կազմում են 50 տոկոս և ավելի ու հնարավոր չէ առանց աուդիտի իրականացման պարզելու տարբերությունների առաջացման պատճառները, Ներքին աուդիտի բաժինը պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնի Համայնքի ղեկավարին: Եթե նշված միավորն ընդգրկված չի եղել ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերում, ապա առաջադրանքը իրականացվում է չնախատեսված դեպքերի համար սահմանված առաջադրանքի շրջանակներում: Այս պարագայում ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերում անհրաժեշտ չէ կատարել փոփոխություններ: Իսկ եթե ռազմավարական և տարեկան ծրագրերում չի ընդգրկվել չնախատեսված դեպքերի համար ներքին աուդիտի իրականացման հնարավորություն կամ այդ ժամկետների համար արդեն իրականացվել են ներքին աուդիտի առաջադրանքներ, ներքին աուդիտը պետք է իրականացվի չպլանավորված առաջադրանքի միջոցով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ներքին աուդիտի տվյալ տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերում:

VIII. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

42.Ներքին աուդիտի աշխատանքային ռեսուրսների բավարար չլինելու պատճառով կամ նեղ մասնագիտական հարցերի գծով կարծիքի անհրաժեշտության ժամանակ Ներքին աուդիտի բաժնի աշխատանքներին կարող են ներգրավվել փորձագետներ կամ խորհրդատուներ:

43.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է ձեռնամուխ լինի Առինջի համայնքապետարանում բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների ցանկի ստեղծմանը: Այդ նպատակով Առինջի համայնքապետարանի միավորների ղեկավարները, ենթակա կազմակերպությունների ու հիմնարկների ղեկավարները պետք է առաջարկեն նշված անձանց՝ ցանկում ընդգրկվելու համար: Մասնագետների ցանկը հաստատվում է Համայնքի ղեկավարի կողմից՝ առանձին որոշմամբ: Փորձագետի ներգրավման համար Ներքին աուդիտի բաժնի պետը միջնորդություն է ներկայացնում Համայնքի ղեկավարին՝ նշված ցանկից փորձագետների ներգրավման նպատակով, կցելով ներգրավման անհրաժեշտությունը և հիմքերը: Ներքին աուդիտի աշխատանքներին ներգրավվող փորձագետը կամ խորհրդատուն պետք է անկախ լինի այն միավորից, որի աուդիտի աշխատանքներին է ընդգրկվում: Համայնքի ղեկավարը կայացնում է փորձագետ ներգրավվելու վերաբերյալ որոշում, որտեղ հստակ պետք է նշվի վերջինիս պարտականությունները:

44.Փորձագետների ներգրավումը կատարվում է առանձին որոշմամբ, քանի որ նրանք կարող են ներգրավվել ավելի կարճ ժամանակով, քան աուդիտորական առաջադրանքի համար նախատեսված ժամկետն է: Փորձագետների և խորհրդատուների գործուղումները նույնպես պետք է առանձին հաշվառվել:

45.Փորձագետների կամ խորհրդատուների տրված եզրակացություններին հղումները կարող են արվել ներքին աուդիտի վերջնական հաշվետվությունում, եթե նրանք տվել են իրենց համաձայնությունը: Համաձայնության բացակայության դեպքում եզրակացությունում արձանագրված հետևությունները և եզրահանգումները վերջնական հաշվետվությունում կարող են արտացոլվել միայն ներքին աուդիտորի անունից: Փորձագետների եզրակացություններում ամրագրված դրույթների պատասխանատուն փորձագետն է, իսկ խորհրդատուների եզրակացությունների համար պատասխանատու է Ներքին աուդիտի բաժնի պետը:

46.Փորձագետների կամ խորհրդատուների կողմից տրամադրվող եզրակացությունները պետք է կազմված լինեն հետևյալ հիմնական բաժիններից՝ ներածություն, վերլուծություններ, եզրահանգումներ:

IX. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

47.Աուդիտի ենթակա միավորը պարտավոր է ներքին աուդիտի իրականացման ընթացքում ներքին աուդիտորներին աջակցել իրենց աշխատանքների իրականացման համար, մասնավորապես՝

- 1) տրամադրել պահանջվող տեղեկատվություն,
- 2) բացատրություններ ներկայացնել առանձին համակարգերի կամ գործառույթների վերաբերյալ,
- 3) հայտարարություններ ներկայացնել պահանջվող մնացորդների կամ այլ տվյալների վերաբերյալ,
- 4) ներքին աուդիտորի գրավոր հարցումներին պատասխանել՝ ներկայացնելով անհրաժեշտ նյութերը,
- 5) սահմանված կարգով տրամադրել պահանջվող փաստաթղթերը,

6) թույլատրել ներքին աուդիտի պահանջներից և նպատակներից առաջացող գույքագրումները, անհրաժեշտության դեպքում կազմել հանձնաժողով՝ գույքագրումը աուդիտի ենթակա միավորի ուժերով իրականացնելու համար,

7) սահմանված կարգով թույլատրել ներքին աուդիտորների մուտքը փակ տարածքներ:

48. Ներքին աուդիտորներն, իրենց լիազորությունների շրջանակում, առաջադրանքի իրականացման ընթացքում պարտավոր են.

1) պահանջել միայն ներքին աուդիտի նպատակներից բխող անհրաժեշտ տեղեկատվություն, բացատրություններ, հայտարարություններ, փաստաթղթեր,

2) գրավոր հարցումներ կատարել միայն ներքին աուդիտի առաջադրանքի շրջանակներում,

3) գույքագրումներն իրականացնել միայն այն դեպքում, երբ դա նախատեսված է ներքին աուդիտի իրականացման կարգադրությամբ կամ հիմնավոր կասկած կա աուդիտի ենթակա միավորում ակտիվների պակասորդի (ավելցուկի) վերաբերյալ և միայն անհրաժեշտության դեպքում պահանջել կազմել հանձնաժողով՝ գույքագրումը միավորի կողմից իրականացնելու համար,

4) կազմել ներքին աուդիտի այն աշխատակիցների ցանկը, որոնք իրավունք կունենան մուտք գործել ներքին աուդիտի ենթակա միավորի փակ տարածքներ: Մուտքի թույլտվությունը պետք է նախատեսված լինի ներքին աուդիտի իրականացման կարգադրությամբ:

49. Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցներն աուդիտի ենթակա միավորում կարող են իրականացնել միայն այն աշխատանքները, որոնք հնարավոր չէ իրականացնել այդ միավորից դուրս: Հաշվարկները, փաստաթղթերի ուսումնասիրությունները (բացառությամբ՝ գաղտնի փաստաթղթերի), համադրումները պետք է իրականացվեն աուդիտի ենթակա միավորից դուրս, որպեսզի ներքին աուդիտորը չխոչընդոտի աուդիտի ենթակա միավորի աշխատանքները:

50. Ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպման խնդիրները պետք է լուծվեն աուդիտորական խմբի ղեկավարի կողմից կազմակերպվող ներքին աուդիտի ենթակա միավորի ղեկավարի հետ առաջին հանդիպման ժամանակ: Աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարը պետք է ընտրի այն աշխատակիցներին, որոնք պետք է համագործակցեն աուդիտորների հետ և կազմակերպեն վերջիններիս աշխատանքը: Աշխատանքների կազմակերպումն ու աուդիտի ժամանակացույցը պետք է կազմված լինեն այնպես, որ համապատասխան աշխատակիցը մեկ անգամ պատասխանի աուդիտորների հարցերին, իսկ պահանջվող հիմնական տեղեկատվությունը պետք է տրամադրվի մեկ անգամ: Աուդիտորների մտահոգությունները պետք է քննարկվեն նույնպես մեկ կամ երկու անգամ: Լրացուցիչ տեղեկատվության և ընթացիկ պարզաբանման համար պետք է նշանակվեն լրացուցիչ օրեր, որոնք պետք է համաձայնեցվեն աուդիտի ենթակա միավորի ղեկավարի հետ: Աուդիտորները չպետք է անընդհատ զբաղեցնեն աուդիտի ենթակա միավորի աշխատակիցներին և իրենց հերթին չխոչընդոտեն աուդիտի ենթակա միավորի աշխատանքները:

Ճ. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՅԻՑ ԴՈՒՐՍ

51. Սահմանափակումը ներքին աուդիտի աշխատանքների կամ Կանոնակարգով նախատեսված ցանկացած գործողությունների շրջանակի իրականացման սահմանումն է, ինչպես նաև ներքին աուդիտի ենթակա միավորների կողմից անգործությունը, որը բերում է կամ կարող է բերել սահմանված ժամկետում ներքին աուդիտի չիրականացմանը, սխալ հավաստիացման տրամադրմանը կամ ծրագրերի իրականացմանը: Սահմանափակումները կարող են լինել ուղղակի կամ անուղղակի:

52. Ուղղակի սահմանափակումը վերաբերում է ներքին աուդիտի գործառույթների իրականացման սահմանափակումներին (օրինակ՝ աուդիտի ընթացքում գույքագրման արգելումը, փաստաթղթեր չտարամաղբելը): Իսկ անուղղակի սահմանափակումը վերաբերում է ներքին աուդիտի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների արգելափակմանը (օրինակ՝ տեղեկատվական տվյալների բազաներին հասանելիության տրամադրման ձգձգումը, խափանումների չվերացնելը և այլն):

53. Աուդիտորական առաջադրանքի խմբի ղեկավարը սահմանափակումների առաջացման մասին նախևառաջ պետք է տեղեկացնի սահմանափակում ստեղծող միավորի ղեկավարին: Խարդախության, չարաշահումների նախանշանների, չթույլատրված գործողությունների հայտնաբերման դեպքում սահմանվում է տեղեկատվությունը փոխանցել սահմանափակումների մասին տեղեկացման սովորական շղթայից դուրս (անմիջական փոխանցումն է Համայնքի ղեկավարին) մեթոդով:

Աուդիտի ենթակա միավորի ղեկավարը իր պարտականությունների (օրինակ՝ աուդիտի ընթացքում շրջանակների սահմանափակում, տրված ներքին աուդիտի հաշվետվության վերաբերյալ արձագանքը ժամանակին չներկայացնելը, ինչպես նաև ներքին աուդիտի օրենսդրության այլ խախտումներ) չկատարման համար կարող է ենթարկվել պատասխանատվության:

54. Կանոնակարգի պահանջների կատարման համար պատասխանատու են ներքին աուդիտի ենթակա միավորները՝ յուրաքանչյուրն իր մասով: Կանոնակարգով սահմանված գործողությունների և գործառույթների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի բաժնի պետը, իսկ վերահսկողությունը՝ Համայնքի ղեկավարը:

XI. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

55. Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են հաշվետվություններում:

56. Աուդիտորական առաջադրանքի հետ կապված հաշվետվությունները լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

57. Աուդիտորական առաջադրանքի ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ Ներքին աուդիտի բաժնի պետը կազմում է աուդիտի արդյունքների մասին արձանագրություն, որի միջոցով աուդիտի ենթակա միավորի ղեկավարը տեղեկացվում է հայտնաբերված թերությունների մասին:

58. Առաջադրանքի ընթացքում հայտնաբերված թերությունների մասին արձանագրությունը ներկայացնելուց հետո Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է անցկացնի վերջնական հանդիպում աուդիտի ենթակա միավորի ղեկավարի հետ՝ քննարկելու հայտնաբերված թերությունները և առաջարկվող լուծումները:

59. Աուդիտորական արդյունքների ամփոփումից հետո Ներքին աուդիտի բաժնի պետը կազմում է արդյունքների մասին նախնական հաշվետվություն: Նախնական հաշվետվությունը տրվում է աուդիտի ենթակա միավորին՝ դիտողությունների ներկայացման համար:

60. Նախնական հաշվետվության կազմման համար հինք են հանդիսանում վերջնական հանդիպման ընթացքում իրականացված քննարկումների արդյունքները: Նախնական հաշվետվության վերաբերյալ աուդիտի ենթակա միավորը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիրքորոշումը, դիտողությունները և առաջարկությունները:

61. Եթե աուդիտի ենթարկվող միավորը չի համաձայնվում աուդիտի արդյունքների հետ, ապա.

1) աուդիտի արդյունքների հաշվետվությունը պետք է փոխվի, եթե աուդիտի ենթարկվող միավորը իրավացի է,

2) եթե աուդիտի ենթարկող միավորը սխալ է, սակայն չի համաձայնվում Ներքին աուդիտի բաժնի կողմից ներկայացված փաստարկներին, ապա վերջնական հաշվետվությունում պետք է ներառվեն դիտողությունները, և Ներքին աուդիտի բաժնի պետը պարտավոր է լրացուցիչ փաստարկներ արձանագրի այնպես, որ Համայնքի ղեկավարը և Կոմիտեն միանշանակ եզրակացություն ստանան աուդիտի արդյունքների մասին,

3) եթե աուդիտի ենթարկվող միավորի կողմից ներկայացված փաստարկները ըստ էության չեն, ապա Ներքին աուդիտի բաժինը պետք է արձագանքի դրանց վերջնական հաշվետվությունում:

62. Անհրաժեշտ քննարկումներից հետո պատրաստվում է աուդիտորական առաջադրանքի վերջնական հաշվետվությունը, որը ներկայացվում է Համայնքի ղեկավարին, Կոմիտեին և ներքին աուդիտի ենթակա միավորների ղեկավարին:

63. Ներքին աուդիտի արդյունքում արված առաջարկություններն ամփոփ տեսքով ներառվում են գործողությունների ծրագրում՝ նշելով բոլոր առաջարկությունների կատարման, թերությունների շտկման և գործողությունների իրականացման համար պատասխանատու անձանց:

64. Ներքին աուդիտի իրականացման արդյունքներով կազմված գործողությունների ծրագրի հիման վրա Համայնքի ղեկավարի կարգադրությամբ հաստատվում են այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ներքին աուդիտի առաջադրանքի ընթացքում բացահայտված խախտումների շտկման ուղղությամբ: Նշված կարգադրությամբ հաստատված ժամանակացույցի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի բաժնի պետը:

65. Ներքին աուդիտի բաժինը պետք է Համայնքի ղեկավարին և Կոմիտեին մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի տարեկան հաշվետվություն՝ համաձայն Ձև 5-ի, որում կամփոփվի տարվա ընթացքում կատարած Ներքին աուդիտի բաժնի գործունեությունը: Հաշվետվությունների ձևաչափերը սահմանվում են Ներքին աուդիտի բաժնի կողմից: Այլ անձանց կամ կազմակերպությունների ցանկը, ովքեր կարող են օգտվել ներքին աուդիտի հաշվետվություններից, այդ թվում արտաքին աուդիտորների, սահմանվում է Համայնքի ղեկավարի կողմից:

Ներքին աուդիտի բաժնի գործունեության տարեկան հաշվետվությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

- 1) Ներածություն,
- 2) Կազմակերպության ներքին հսկողության գործընթացները,
- 3) Ներքին աուդիտի բաժնի կատարողականը,

- 4) Ամփոփագիր,
- 5) Եզրակացություններ:

Ներքին աուդիտի բաժինը կարող է ներկայացնել միջանկյալ հաշվետվություն, եթե ներքին աուդիտի իրականացման ընթացքում կամ վերլուծությունների և համադրումների իրականացման դեպքում ներքին աուդիտի ենթակա միավորներում հայտնաբերվում են.

- 1) խարդախության նշաններ կամ,
- 2) ակտիվների 20 տոկոսից ավելի պակասորդ (հավելուրդ), կամ
- 3) եթե աուդիտն իրականացվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին՝ այսինքն տարին հատվում է, կամ
- 4) եթե ներքին աուդիտի իրականացման ընդհանուր ժամկետը գերազանցում է 3 ամիսը, կամ
- 5) առանձին հարցեր պետք է ներկայացվեն այլ մարմինների (այդ թվում՝ քննչական), կամ
- 6) այն դեպքերում, երբ վերջնական հաշվետվության մի մասը պետք է առանձնացվի:

Միջանկյալ հաշվետվությունը ներկայացվում է անհրաժեշտության դեպքում, սակայն եթե մինչև աուդիտի ավարտը մնում է 3/4-ից պակաս (բացառությամբ սույն Կանոնակարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետում նշված դեպքից), ապա նպատակահարմար չէ միջանկյալ հաշվետվության ներկայացումը, տվյալ դեպքում Ներքին աուդիտի բաժինը պետք է լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու միջոցով արագ ավարտի ներքին աուդիտի առաջադրանքով նախատեսված աշխատանքները և ներկայացնի վերջնական հաշվետվություն:

66. Միջանկյալ հաշվետվությունները պետք է ներկայացվեն աուդիտի առաջադրանքի համար սահմանված ձևաչափով: Միջանկյալ հաշվետվությունում նաև պետք է նշվի դրա ներկայացման նպատակը: Միջանկյալ հաշվետվության ներկայացումը չի ազատում վերջնական հաշվետվության ներկայացման պարտավորությունից: Վերջնական հաշվետվությունում անհրաժեշտ է ներառել նաև միջանկյալ հաշվետվությամբ ներկայացված դրույթները և հղում կատարել դրան: Միջանկյալ հաշվետվությունը պետք է կցվի վերջնական հաշվետվությանը:

67. Առանձին դեպքերում ներքին աուդիտի իրականացման ընթացքում Համայնքի ղեկավարը կարող է պահանջել Ներքին աուդիտի բաժնից ներկայացնել միջանկյալ հաշվետվություն մինչև վերջնական հաշվետվության կազմումը:

68. Ներքին աուդիտի բաժնի պետը պատասխանատու է Լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունների և այլ տեղեկությունների Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացման համար: Եթե հաշվետվությունների ներկայացումը պայմանավորված է որևէ միավորի կողմից տեղեկատվության ներկայացումից, ապա Ներքին աուդիտի բաժնի պետը պարտավոր է հաշվետվության կամ տեղեկատվության ներկայացման համար սահմանված ժամկետից հինգ աշխատանքային օր առաջ գրավոր զգուշացնել միավորի ղեկավարին՝ կցելով պահանջվող տեղեկատվության ձևաչափը: Համապատասխան միավորի ղեկավարը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

69. Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են նաև կազմում սույն Կանոնակարգի 26-րդ N 6-ում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները սույն Կանոնակարգի 26-րդ N 6-ում ներկայացված աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

XII. ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

70. Վերստուգման գործընթացը հանդիսանում է առաջադրանքի իրականացման աշխատանքների վերջնական փուլը: Այն մեկնարկում է Ներքին աուդիտի բաժնի հաշվետվության հաստատմամբ և ավարտվում է գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարմամբ: Վերստուգման գործընթացի ընթացքում Ներքին աուդիտի բաժինը անընդհատ հսկողություն պետք է իրականացնի գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ:

71. Աուդիտի ենթակա միավորը պարտավոր է գործողությունների ծրագրով նախատեսված ժամկետում վերացնել արձանագրված շեղումներն ու բացթողումները և այդ մասին գրավոր տեղեկացնել Ներքին աուդիտի բաժնին:

72. Վերստուգման գործընթացի ճիշտ կազմակերպման և ռեսուրսների ճիշտ բաշխման նպատակով անհրաժեշտ է ճիշտ գնահատել գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար հիմք ծառայած թերությունների կարևորության աստիճանը՝ «փոքր», «միջին» կամ «հիմնական»:

Թերությունը պետք է գնահատվի «հիմնական», եթե վերաբերում է հսկողության համակարգի հույժ կարևոր թերություններին և պետք է արժանանա Համայնքի ղեկավարի, Կոմիտեի և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հրատապ ուշադրությանը և թերության վերացման համար անհրաժեշտ է նախագծել և ներդնել նոր հսկողական համակարգ:

Թերությունը պետք է գնահատվի «միջին», եթե վերաբերում է հսկողության համակարգի կարևոր թերություններին և գործողության շտկման համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել գործող և ներդրված հսկողական համակարգում: Թեև այս խմբում դասակարգված առաջարկությունները նույնպես կարող են պահանջել հրատապ լուծում, սակայն անհրաժեշտ չէ, որ դրանք անմիջապես կատարվեն Համայնքի ղեկավարի, Կոմիտեի և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի կողմից:

«Փոքր» թերությունները հսկողության համակարգի ավելի քիչ կարևոր թերություններն են, որոնց վերացման համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել ներկայացված տվյալներում կամ հաշվետվությունում: Փոփոխությունները պետք է իրականացվեն գործունեության ընթացքում, սակայն չպետք է դիտարկվեն որպես առաջնային լուծում պահաջող հարցեր:

73. Հիմնական աստիճան ունեցող թերությունների վերացման նկատմամբ Ներքին աուդիտի բաժինը պետք է իրականացնի տասնհինգ օրյա հսկողություն, այս դեպքում գործողության համար պատասխանատու անձը պետք է տասնհինգ օրը մեկ հաշվետվություն ներկայացնի Ներքին աուդիտի բաժին՝ նշելով իրականացված միջոցառումները և կատարման աստիճանը: Իսկ միջին և փոքր աստիճան ունեցող թերությունների վերացման համար նախատեսված միջոցառումների (գործողությունների) նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի կատարման ժամկետի յուրաքանչյուր 1/2-ի ավարտին:

Յուրաքանչյուր գործողությունների ծրագրով նախատեսված ժամկետների ավարտից հետո Ներքին աուդիտի բաժնի պետը Համայնքի ղեկավարին ներկայացնում է հաշվետվություն գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ՝ նշելով կատարված գործողությունների արդյունավետությունը կամ իրականացումը չապահովելու հետևանքով առաջացած ռիսկը:

Այն դեպքում, երբ աուդիտի ենթարկված միավորը չի ներկայացնում թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է այդ մասին գրավոր զգուշացնի աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին: Եթե երկու աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը չի ներկայացվում, Ներքին աուդիտի բաժնի պետը այդ մասին հաղորդում է Համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը, խորհրդակցելով Կոմիտեի հետ, կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) նշանակել նոր աուդիտ՝ պարզելու շտկման գործողությունների ընթացքը,

2) հանձնարարական արձակել աուդիտի ենթարկված միավորում լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ,

3) կախված թույլ տրված խախտումից՝ կարգապահական պատասխանատվության ենթարկել աուդիտի ենթարկված միավորի պատասխանատուներին,

4) ստանձնել գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների չկատարման ռիսկը, ինչի վերաբերյալ պետք է փոփոխություն կատարվի գործողությունների ծրագրում:

74. Այն դեպքերում, երբ շտկման գործողությունների ժամկետն ավարտվում է ներքին աուդիտի իրականացմանը հաջորդող տարում, Ներքին աուդիտի բաժինը շտկման գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ այդ տարվա տարեկան ծրագրում պետք է ներկայացնի տեղեկատվություն՝ այդ պահին կատարված միջոցառումների մասին: Եթե «հիմնական» աստիճանի գործողությունների իրականացման արդյունքում միավորում պետք է ներդրվի նոր հսկողական գործընթաց, ապա դրա նախագծման և ներդրման փուլերի ավարտից հետո Ներքին աուդիտի բաժինը պետք է նախատեսի այդ հսկողական համակարգի նախագծի և ըստ էության գնահատման թեստեր նախատեսող աուդիտորական առաջադրանք:

75. Ամեն դեպքում Ներքին աուդիտի բաժինը պետք է նախաձեռնի հայտնաբերված թերությունների նախադեպերի կանխման ուղղությամբ աշխատանքներ: Առաջադրանքի իրականացումից հետո և գործողությունների ծրագրի կազմումից հետո պետք է կազմվի նաև նշված խախտումների պրոֆիլավորում: Պրոֆիլը՝ Համայնքի ղեկավարի կողմից ստորագրված այն փաստաթուղթն է, որը պետք է տարածվի Ադինքի համայնքապետարանի ներսում գործող միավորների վրա: Պրոֆիլում պետք է մանրամասն նկարագրվի կատարված խախտումը կամ հայտնաբերված թերությունը և հանձնարարական տրվի նմանատիպ գործառույթներ իրականացնող միավորներին նման թերության կամ խախտման հայտնաբերման դեպքում դրա վերացման մասին:

76. Պրոֆիլները պետք է կազմվեն որոշակի ժամանակահատվածի համար՝ 15 օր: Պրոֆիլների կատարման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացնի Ներքին աուդիտի բաժինը: Պրոֆիլների ժամկետի ավարտից հետո կատարող միավորը 1 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի պրոֆիլով նախատեսված և կատարված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն: Այս

հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն, որը թույլ կտա պատկերացնելու նմանատիպ շեղումների կամ խախտումների բնույթը:

XIII. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԴԻՏԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

77. Աուդիտորական առաջադրանքների իրականացման ընթացքում կազմված աշխատանքային փաստաթղթերը խմբավորվում են յուրաքանչյուր առաջադրանքի աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթում:

78. Աշխատանքային փաստաթղթերի կազմման ընթացքում ներքին աուդիտորը պետք է ներկայացնի իրականացված բոլոր աշխատանքները՝ նշելով նաև այնպիսի աշխատանքներ, որոնց իրականացման ընթացքում չի հայտնաբերվել թերություններ:

79. Ներքին աուդիտի իրականացման ընթացքում անհրաժեշտ է փաստաթղթավորել բոլոր փուլերը և քայլերը: Դա վերաբերում է ինչպես ներքին աուդիտորների կողմից կազմվող փաստաթղթերին, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման ընթացքում աուդիտի ենթակա միավորների կողմից տրամադրվող տեղեկատվությանը (տեղեկանքներ, բացատրություններ, հղումներ և այլն): Նշված փաստաթղթերը պետք է հաստատված լինեն դրանք տրամադրող պաշտոնատար անձի կողմից և, անհրաժեշտության դեպքում, ունենան այլ անհրաժեշտ վավերապայմաններ:

80. Յուրաքանչյուր առաջադրանքի համար սովորաբար պահվում է երկու փաթեթ՝ հիմնական և ընթացիկ:

81. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի հիմնական փաթեթը ներառում է այնպիսի փաստաթղթեր, որոնք ունեն երկարատև նշանակություն, որոնցում նկարագրված են միավորի աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները, սահմանվում են պատասխանատու անձանց շրջանակները կամ նրանց միջև աշխատանքների բաշխումը: Այդ փաստաթղթերը ուսումնասիրվում են, և դրանց կազմը վերանայվում է յուրաքանչյուր առաջադրանքից առաջ և հետո:

82. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի հիմնական փաթեթը կարող է ներառել հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը՝

- 1) կազմակերպչական կառուցվածքները,
- 2) տեխնիկական առաջադրանքները և միավորի կողմից սահմանված խնդիրները,
- 3) համապատասխան աշխատանքային նկարագրությունները և լիազորությունների շրջանակները,
- 4) հիմնական գրանցամատյանների կամ հաշիվների ցանկը,
- 5) միավորի վերաբերյալ գրանցումները,
- 6) միավորի գործունեության թերությունների վերաբերյալ գրանցումները,
- 7) փաստաթղթերի ստանդարտ օրինակները, գրանցումների և հաշվետվությունների քաղվածքները,
- 8) գործառույթների, գործառնությունների ծավալի և այլ նկարագրություններն ու վերլուծությունները,
- 9) առաջադրանքի կատարման մասին հաշվետվությունները, դրանց օրինակների հետ ծանոթացողների ցանկը և հաջորդ առաջադրանքի աշխատանքների վերաբերյալ գրանցումները,
- 10) այլ հաշվետվություններ, օրինակ՝ արտաքին աուդիտորների և այլ ստուգող կառույցների ստուգման հաշվետվությունները,

11) ղեկավարության արձագանքները և նամակագրությունը,

12) ներքին աուդիտի բաժնի աշխատակիցներից բացի աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթին ծանոթացած անձանց ցանկը:

83. Հիմնական փաթեթում պահպանման ենթակա փաստաթղթերում կատարված փոփոխությունները կամ դրանցում փոփոխություններ չլինելու մասին գրավոր տեղեկատվությունը միավորների ղեկավարները յուրաքանչյուր կիսամյակ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 15-ը պետք է ներկայացնեն Ներքին աուդիտի բաժնի:

84. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի ընթացիկ փաթեթը ներառում է առանձին աուդիտներին վերաբերող փաստաթղթերը, այդ թվում՝ հիմնական փաթեթից ժամանակավորապես վերցված որոշ փաստաթղթեր կամ դրանց օրինակները:

85. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի ընթացիկ փաթեթը կարող է պարունակել հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը՝

- 1) առաջադրանքի նպատակները և շրջանակները,
- 2) նախորդ առաջադրանքի հաշվետվությունը, նախաձեռնված միջոցառումները, նախորդ առաջադրանքի աշխատանքներին հղումները և դրանցից բխող հետագա աշխատանքները,
- 3) համակարգի վերաբերյալ գրանցումները, գծապատկերները և այլ նկարագրություններ,
- 4) աուդիտի աշխատանքային ծրագրերը,

- 5) առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը,
- 6) առաջադրանքի աշխատանքների ուսումնասիրման մասին գրանցումները,
- 7) առաջադրանքի հաշվետվության նախագիծը,
- 8) առաջադրանքի ամփոփ եզրակացությունը և առաջադրանքից հետո անցկացված քննարկումների մանրամասները,
- 9) ղեկավարությանը ներկայացված առաջադրանքի հաշվետվությունը,
- 10) առաջադրանքի ավարտից հետո կատարված գրանցումները և նամակագրությունը,
- 11) Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցներից բացի աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթին ծանոթացած անձանց ցանկը:

86. Հանդիսանալով առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ հիմնական փաթեթի փաստաթղթերի պահպանումը սահմանվում է մինչև 10 տարի, իսկ ընթացիկ փաթեթի փաստաթղթերի պահպանումը՝ մինչև 5 տարի: Որից հետո դրանք ենթակա են հանձման արխիվ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

87. Փաստաթղթերից օգտվելու հիմնական իրավասությունը պատկանում է Համայնքի ղեկավարին և նա կարող է որոշում կայացնել առանձին անձանց թույլատրելու օգտվել Ներքին աուդիտի բաժնում պահպանվող փաստաթղթերից:

88. Փաստաթղթերին ծանոթացող պաշտոնատար անձինք պետք է նշում կատարեն փաստաթղթերի փաթեթում, ինչպես նաև ներկայացնեն հայտարարություն դրանք միայն ծառայողական նպատակներով օգտագործելու մասին:

89. Ներքին աուդիտորը չպետք է գրանցի անձնական տեղեկություններն առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերում, եթե դա չի հանդիսանում առաջադրանքի իրականացման հիմքը կամ առարկան:

XIV. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

90. Արտաքին աուդիտորների գործունեության և այդ աշխատանքները Ներքին աուդիտի բաժնի աշխատանքների հետ համակարգման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Համայնքի ղեկավարը և Կոմիտեն: Ներքին և արտաքին աուդիտի աշխատանքի համակարգման պատասխանատուն Ներքին աուդիտի բաժնի պետն է:

91. Ներքին աուդիտի գործառույթների իրականացմանն օժանդակելու նպատակով՝ Ադինջի համայնքապետարանը կարող է օգտվել արտաքին աուդիտորների հավաստիացման ծառայությունից: Այս դեպքում Ներքին աուդիտի բաժնի պետը, արտաքին աուդիտորների կողմից իրականացված աշխատանքների արդյունավետությունը որոշելու համար, ձեռնարկում է հետևյալ քայլերը.

1) հավաստիանում է, որ արտաքին աուդիտորների կողմից պլանավորված աշխատանքների բնույթը, ծավալը և ժամկետները համընկնում են ներքին աուդիտորների պլանավորված աշխատանքների հետ,

2) արտաքին աուդիտորների ռիսկի և էականության գնահատումը,

3) արտաքին աուդիտորների կողմից աուդիտի տեխնիկայի, մեթոդների և տերմինաբանության փոխանցումը Ներքին աուդիտի բաժնի պետին, որպեսզի նա կարողանա համակարգել ներքին և արտաքին աուդիտի աշխատանքները, գնահատել արտաքին աուդիտի աշխատանքը, վերջինիս ծառայություններից օգտվելու նպատակով, և արդյունավետ հաղորդակցվել արտաքին աուդիտորների հետ,

